ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ԽՆԴԻՐԸ*

Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Դաշնակից տերությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնություն ցույց տալու խնդիրը առաջնակարգ նշանակություն ստացավ հատկապես 1920 թ. գարնանը։ Ռազմական օգնության խնդրանքով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919 թ. շարունակաբար դիմել է ոչ միայն եվրոպական առանձին երկրների կառավարություններին, այլև Փարիզի խաղաղության կոնֆերանսին և նրա գերագույն խորհրդին։ Առավել շատ այդ դիմումներն ուղղված են եղել Անգլիայի կառավարությանը, քանի որ Հայաստանը գտնվում էր նրա ազդեցության ոլորտում։ Այդ դիմումները պայմանավորված էին նրանով, որ Թուրքիան շարունակաբար սպառնում էր Հայաստանի անկախությանը, իսկ Ադրբեջանի կառավարությունը, մշտապես ստանալով Թուրքիայի օգնությունը, ձգտում էր զենքի ուժով տեր դառնալ Ղարաբաղին, Զանգեզուրին, Նախիջևանին և նրանց հարակից հայկական այլ տարածքներին։

Հայաստանի Հանրապետության կառավարության առաջին դիմումներից մեկը եղել է 1919 թ. ապրիլի 1-ին՝ ուղղված Անգլիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրին։ Դիմումում նշվում էր Հայաստանի վրա կախված Թուրքերի և Թաթարների (ադրբեջանցիների) սպառնալիքի մասին և խնդրվում էր ինքնապաշտպանության համար զենքով ու ռազմական այլ հանդերձանքով օգնել հայկական բանակին։

Անգլիայի ռազմական խորհուրդը 1919 թ. ապրիլի 6-ին իր կառավարությանը հայտնել էր, որ դեմ է Վրաստանին և Ադրբեջանին զենք մատակարարելուն, բայց որոշ ժամանակ անց չէր առարկել, որ Հայաստանին զենք տրվի։ Ռազմական խորհուրդը միաժամանակ վերապահում էր, որ կարելի է զենք տալ այն քանակով, որն անհրաժեշտ է «միայն ինքնապաշտպանության ապահովման համար»։ Ռազմական խորհուրդը միաժամանակ նշում էր, որ «Լորդ Քերզոնը իր ապրիլի 11-ի թիվ 156 հեռագրով հորդորում էր հայերին՝ հարձակվել Թուրքերի վրա»։ Ռազմական խորհուրդը հայտնում էր կառավարությանը, որ դեմ է զենքի «ցանկացած անկանոն բաշխմանը», մանավանդ, որ ռազմական շտաբի պետ մարշալ Ֆոշը դեռևս չէր տվել իր համաձայնությունը[1]։

Հայաստանին զենք մատակարարելու հարցը, այդպիսով, մնաց օդից կախված։ Ադրբեջանի կառավարությունը ևս, չնայած մերժմանը, շարունակում էր զենք պահանջել՝ բոլշևիկներին դիմադրելու և նրանց դեմ պայքարելու պատճառաբանությամբ։ Ադրբեջանի արտգործնախարարը Թիֆլիսում անգլիական կոմիսարի հետ ունեցած հանդիպման ժամանակ պահանջել էր «դաշնակիցների կողմից որոշակի հայտարարություն անել այն մասին, թե համաձայն իրենց՝ երկու ամիս առաջ տված խոստմանը, բոլշևիկների հարձակման դեպքում Ադրբեջանին դիվանագիտական և նյութական օգնություն

---

* Ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը հրատարակության է նախապատրաստել «Մեծ մատնություն (Մեկնություններ Հայկական հարցի պատմության)» մեծածավալ աշխատությունը։ Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մի հատված այդ մենագրությունից։

[1] Public Record office (London). FO 371/4935 p 48—44.

ցույց կտրվի՞, թե ոչ»։ Նախարարը կարծիք էր հայտնել, որ եթե ռազմական օգնություն չստացվի, ապա Ադրբեջանը և Վրաստանը կանցնեն Ռուսաստանի կողմը, «բացառությամբ Հայաստանի, որը կմնա Արևմտյան Եվրոպայի մանդատի հովանու տակ»[2]։

1919 թ. հունիսի 19-ին ռազմական օգնություն ստանալու խնդրանքով Հայաստանի կառավարությունը դիմել էր Փարիզի խաղաղության կոնֆերանսին։ Չստանալով որևէ պատասխան, այն օգոստոսի 6-ին դիմում էր հղել կոնֆերանսի նախագահին, որտեղ մասնավորապես նշվում էր, որ բոլշևիկյան Ռուսաստանի գործակալները իրենց ջանքերը միավորել են Թուրքական ուժերի հետ՝ ընդդեմ Հայաստանի։ Այդ նույն օրը Հայաստանի կառավարությունը դիմել է Լլոյդ Ջորջին, հայտնելով, որ Հայաստանում ստեղծվում է 30-հազարանոց բանակ, որը ռազմական հանդերձանքի խիստ կարիք ունի։ Չբավարարվելով դրանով, նույն օգոստոսի 6-ին Հայաստանի կառավարությունը դիմել է նաև Անգլիայի արտաքին գործերի նախարար Բալֆուրին։

1919 թ. սեպտեմբերի 20-ին, դեկտեմբերի 2-ին, դեկտեմբերի 9-ին, դեկտեմբերի 10-ին կրկնվել են Հայաստանի Հանրապետության կառավարության խնդրանքները Փարիզի խաղաղության կոնֆերանսի նախագահին, որոնցում հատկապես ընդգծվել են Ադրբեջանի կողմից Հայաստանին սպառնացող վտանգի և ձեռնարկվող ագրեսիվ քայլերի մասին։ Դեկտեմբերի 11-ին կրկին դիմում է ներկայացվել Լլոյդ Ջորջին, որտեղ նշվում էր հայկական բանակի վերակառուցման և այդ կապակցությամբ պահանջվող ռազմական օգնության անհրաժեշտության մասին։

Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության ռազմական խորհրդական, գեներալ Կորգանովը օգոստոսին գործուղվել էր Լոնդոն և Անգլիայի կառավարությանն էր ներկայացրել ընդարձակ զեկուցագիր՝ Հայաստանի ռազմական դրության մասին։ Կորգանովը, որը Լոնդոն էր ժամանել օգոստոսի 28-ին, վեց շաբաթ անդադար բախում էր Անգլիայի արտգործնախարարության և ռազմական նախարարության դռները՝ օգնություն խնդրելով։

1919 թ. սեպտեմբերի 1-ին Կորգանովը հանդիպել է ռազմական նախարարության բարձրաստիճան պաշտոնյա գնդապետ Գրիբոնին, որը Հայաստանի ռազմական ուժերի մասին Կորգանովի ներկայացրած տեղեկանքը հանձնել է նախարար Ուինստոն Չերչիլին։ Ըստ այդ տեղեկանքի, Հայաստանի բանակի շարքային կազմում կային 17 հազար 729 զինվոր, 824 սպա։ Բանակն իր տրամադրության տակ ուներ 3 զրահապնացք, 4843 ձի[3]։

Կորգանովի առաքելությունն արդյունքներ չտվեց։ Նոյեմբերի 14-ին Լոնդոն մեկնեց Ավ. Ահարոնյանը, որը ևս արդյունքի չհասավ։ Դեկտեմբերի 29-ին Ահարոնյանը կրկին մեկնեց Լոնդոն, այս անգամ իր հետ տանելով ընդարձակ տեղեկատվություն՝ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին։ Անգլիայի կառավարությանը ներկայացրած զեկուցագրում Ավ. Ահարոնյանը հիմնավորում էր Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը, ընդգծելով երկրի ոչ միայն ռազմական, այլև սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը։

Հայաստանում տիրող իրավիճակի մասին Անգլիայի կառավարությունը տեղեկություններ էր ստանում նաև իր սեփական աղբյուրներից և, բնականաբար, առավել նշանակություն էր տալիս այդ տեղեկություններին։ Ահա թե ինչ էր գրում իր կառավարությանը Անգլիայի արտաքին գործերի նախարարության Մերձավոր արևելքի դեպարտամենտի պատասխանատու աշխատակից Կիդստոնը 1919 թ. նոյեմբերի 28-ին. «Այն, ինչ մեզ հայտնի է Կովկասից,—գրում էր նա,—խոսում է այն մասին, որ հայերը, հավանաբար,

---

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, FO 608/78, pp. 557—560.

կարող են իրենք իրենց պաշտպանել հարավից եկող ագրեսիայից, գոնե որոշ ժամանակ... Ես լրիվ բաժանում եմ ռազմական նախարարության կարծիքը և հավատում եմ, որ, մեղմ ասած, հիմնավորված չէր լինի հայերին ցանկացած քանակի զենք և ռազմամթերք տրամադրելը... Բացի այդ, Երևանում իշխանության գլուխ կանգնած դաշնակցականները վստահություն չեն ներշնչում... Դաշնակցականների և հնչակյանների հավերժ թշնամությունը թունավորում է հայկական ամբողջ միջավայրը և ցանկացած իշխանության հուսահատեցնում՝ իր անզոր լինելում, որ չի կարող որևէ արդյունավետ բան կատարել այդ անբախտ ժողովրդի համար...»[4]։

1919 թ. աշնանը Անգլիան առաջին քայլերն է կատարում Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Գեներալ Ուորտրոպը սեպտեմբերի 12-ին Լոնդոն ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ Հայաստանին տրվել է մեկ միլիոն փամփուշտ։ «Երեկ,—գրում է նա,—Վրաստանի վրայով Հայաստան առաքված մեկ միլիոն փամփուշտով Հայաստանն ի վիճակի է մինչև 32 տարեկան բոլոր տղամարդկանց մոբիլիզացնելու միջոցով հաջողությամբ կռվել և դիմանալ 2 ամսվա ընթացքում, բայց նա վտանգի տակ կդնի ուժասպառ բնակչության կյանքը...»[5]։

1920 թ. հունվարի 1-ին Ավ. Ահարոնյանը հանդիպել է Լլոյդ Ջորջի, իսկ հունվարի 8-ին Ու. Չերչիլի հետ։ Մարտի 2-ին, 15-ին, 17-ին Ահարոնյանը կրկին դիմել է խաղաղության կոնֆերանսի գերագույն խորհրդին և Անգլիայի կառավարությանը՝ նշելով, թե ինչպես է օր-օրի վատանում Հայաստանի վիճակը, և թե որքան խիստ է անհրաժեշտ նրան ռազմական օգնություն ցույց տալը։ Գեներալ Բագրատունին և Ավ. Ահարոնյանը Փարիզում և Լոնդոնում այդ ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են ունեցել մամուլի ներկայացուցիչների հետ։ Այդ հանդիպումների ժամանակ վերջիններս տեղյակ են պահվել, որ Հայաստանի կառավարությունը 1919 թ. ապրիլի 1-ին, ապա օգոստոսի 23-ին դիմել է Ա. Բալֆուրին, օգոստոսի 7-ին՝ Լլոյդ Ջորջին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 20-ին, դեկտեմբերի 2-ին, 9-ին, 10-ին՝ խաղաղության կոնֆերանսի նախագահ Կլեմանսոյին և ուրիշներին։ Սակայն, ինչպես գրել է Ահարոնյանը Լորդ Քերզոնին (1920 թ. մայիսի 15-ին), «դրժբախտաբար այս բոլոր դիմումներն առ այսօր իզուր են անցել, և Հայաստանը ռազմական կարգի ոչ մի օգնություն չի ստացել»[6]։ Ավ. Ահարոնյանը, նշելով, որ դեռևս ապրիլի 27-ին Անգլիայի կառավարությանը տեղյակ է պահել, որ ինքը լիազորված է իր կառավարության անունից պայմանագրեր կնքելու, զենք և ռազմական հանդերձանք դնելու, վերը նշված նամակն ավարտում է հետևյալ տողերով. «Եկել է ժամանակը, երբ հայ ազգը իրավունք ունի իմանալու, թե ում կարող է վստահել իր ղեկավարության, օգնության, պաշտպանության, փրկության և արդարության գործը»։ Նա դժգոհություն է հայտնում, որ պատերազմում կրած ծանր տանջանքներից հետո, երբ հայ ժողովրդի լինելության հարցն է որոշվում, նրա բոլոր խնդրանքները մնացել են անհետևանք։ «Այս դիմումը,—վերջում գրում է Ահարոնյանը,—հղում եմ Ձեզ ոչ միայն հանուն ռազմի դաշտում զոհաբերություն մատուցած իմ նահատակված ժողովրդի, ոչ միայն Անտանտի գործին նրա անօրինակ նվիրվածության, այլև հանուն տերությունների կողմից Թուրքիայի հետ կնքած պայմանագրում տրված հանդիսավոր խոստումների...»[7]։

Քաղաքականության մեջ աղերսանքների լեզուն դեր չի խաղում։ Իրադարձությունները շարունակում էին զարգանալ ըստ խոշոր տերությունների մշակած պլանների։ Դեռևս 1917 թ. անգլիական գեներալ Դենստերվիլը չէր թաքցնում, որ, ըստ այդ պլանների, Անդրկովկասի ժողովուրդները «պետք է

---

4 Նույն տեղում, էջ 686—688։

5 Նույն տեղում, էջ 476։

6 Նույն տեղում, FO 371/4956, pp. 124–130.

7 Նույն տեղում, էջ 129—130։

շարունակեն սպանել միմյանց, մինչև որ ուժասպառ լինեն, և այն ժամանակ գուցե և կարողանանք այնտեղ կարգ հաստատել»[8]։

Անգլիական քաղաքական գործիչները Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հետ ունեցած իրենց հանդիպումներում մշտապես աշխատում էին չմեռցնել հայերի հույսերը Անգլիայի նկատմամբ, սակայն գործում էին միայն իրենց քաղաքական նպատակահարմարության դիրքերից։ Ասվածը կարելի է պարզաբանել հետևյալ օրինակով. Հայաստանի կառավարության խնդրանքով, Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսար գեներալ Ուորտրոպը 1919 թ. սեպտեմբերի 17-ին հայտնել էր իր կառավարությանը, որ «հայերը թախանձագին մեզ խնդրում են իրենց անհետաձգելի օգնություն ցույց տալ զենքով ու ռազմական հանդերձանքով և ցանկություն են դրսևորում իրենց ռազմական ուժերը դնել բրիտանական կամ դաշնակիցների սպաների ղեկավարության տրամադրության տակ...»[9]։

Անգլիայի ռազմական խորհուրդը 1919 թ. հոկտեմբերի 23-ին Հ. Քրիդիի ստորագրությամբ հետևյալ պատասխանն է հղել գեներալին. «Ի պատասխան Ձեր հաղորդագրությանը, հայտնում եմ, որ, ցավոք սրտի, խորհուրդն իր տրամադրության տակ չունի ո՛չ զենք և ոչ էլ տեխնիկա, որպեսզի բավարարի այդ առաջարկը։ Ավելին, խորհուրդը պաշտպանում է այն կարծիքը, որն արտահայտված է իր օգոստոսի 26-ի պատասխանում, այն մասին, որ հայերին զենք տալը կհանգեցնի նրանց կողմից կանխամտածված գործողությունների և էլ ավելի կբարդացնի ծանր իրադրությունը։

Հայերին զենքով ու տեխնիկայով օգնություն ցույց չտալու մյուս պատճառները, որոնցով ղեկավարվում է խորհուրդը, հետևյալներն են. ա) կասկածամտությունը, որ կարող է ստեղծվել հարևան երկրներում, բ) Թուրքիայում մահմեդականների թշնամության աճի վտանգը՝ ինչպես հայերի, նույնպես և Անտանտի պետությունների հանդեպ»[10]։

Ռազմական ու դիվանագիտական որոշ գործիչներ (էյր Կրաուֆը և ուրիշներ) այն կարծիքին էին, որ անհրաժեշտ էր հայերին օգնել «աննշան քանակի զենքով ու տեխնիկայով, որը նրանց հնարավորություն կտար իրենց սահմաններում պաշտպանվելու Թուրքերից և քրդերից ու ադրբեջանցիներից... «Աշխարհի այս մասում դեռևս գոյություն ունեցող հայերին,—նշում է էյր Կրաուֆը արտաքին գործերի նախարարությանը գրած իր 1919 թ. նոյեմբերի 17-ի նամակում,—մեծ վտանգ է սպառնում Թուրքերի և Թաթարների կողմից ենթարկվելու հարձակման և վերածվելու ոչնչացման օբյեկտի, քան ընդհակառակը»։ Կրաուֆը նեղադրում էր ռազմական նախարարությանը, որը պաշտպանում էր օսմանցի Թուրքերի շահերը՝ ի հաշիվ կայսրությունում բնակվող ազգային փոքրամասնությունների։ «Ես հույս ունեմ,—շարունակում է Կրաուֆը,—որ ոչ Նորին մեծության կառավարությունը, ոչ էլ խաղաղության կոնֆերանսը չեն ենթարկվի ռազմական նախարարության քաղաքական ներգործությանը»[11]։

Անգլիայի ռազմական խորհուրդը դեմ էր ոչ միայն Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալուն, այլև Արևմտյան Հայաստանի ազատագրմանը։ Այդ դիրքորոշումը պաշտպանում էր լորդ Քերզոնը։ 1919 թ. հոկտեմբերի վերջերին Մեծ Բրիտանիայի ռազմական խորհրդում ստացվել էր գեներալ Կորգանովի նամակը, որով նա խնդրում էր օգնել Հայաստանի կառավարությանը՝ ստեղծելու 30-հազարանոց բանակ։ Այդ կապակցությամբ, երբ քննարկվել է Կորգանովի նամակը, լորդ Քերզոնը հայտարարել է. «Գեներալ Կորգանովի առաջարկը հանգում է Երևանի շուրջը փոքրիկ հայկական

---

8 *Декстервиль*, Британский империализм в Баку и Персии 1917—1918 гг. (Воспоминания), Тифлис, 1925, с. 65.

9 Public Record office (London), FO 608/78, p. 458.

10 Նույն տեղում, էջ 549։

11 Նույն տեղում, էջ 564—570։

պետություն ստեղծելու հարցի քննարկմանը։ Ռազմական խորհուրդը դտնում է, որ դա հարմար առիթ կլիներ ասելու, որ ինչ-որ հեռանկարներ չկան Մեծ Հայաստան ստեղծելու համար, որը ծավալվելու էր Կիլիկիայից մինչև Կովկաս։ Այժմ, երբ Կիլիկիան հավանաբար կդտնվի ֆրանսիական մանդատի հովանու տակ, տեղին կլինի մոռանալ Մեծ Հայաստան ստեղծելու գաղափարը և փորձել համոզել հայերին, որ ապագայի առավել լավ հեռանկարը երկու փոքրիկ պետությունների ստեղծումն է, մեկը՝ Կիլիկիայում, մյուսը՝ Կովկասում»[12]։

Անգլիական կառավարության այս ներքին տրամադրվածությունը, որը խիստ գաղտնի էր պահվում, հետագայում վճռորոշ դեր պետք է խաղար հայ ժողովրդի ճակատագրում, չնայած Անգլիայի կառավարությունը ամիսներ անց իր ստորագրությունը պետք է դներ Սևրի պայմանագրի տակ։

Չնայած այս ամենին, քաղաքական շրջադարձերի ճնշման տակ անգլիական իշխանությունները չէին կարող շրջանցել Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու հարցը։ Անգլիայի արտաքին գործերի և ռազմական գործերի նախարարություններում Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու հարցը պաշտոնապես առաջին անգամ քննարկվեց 1920 թ. ապրիլին։ «Հայաստանի կառավարությունը,—ասված է վերը նշված նախարարությունների համատեղ նիստի մասին ինֆորմացիայում,—դրամ չունի և համապատասխան անվտանգությունից զուրկ է, չնայած համոզված է, որ ի վիճակի է կարճ ժամկետում մարել փոխառությունը»։ Հայաստանին ռազմական վարկ բաց թողնելու հարցը սուր վիճաբանությունների առարկա դարձավ։ Հայաստանի կառավարությունը խնդրել էր իրեն հատկացնել 500 հազար ֆունտ ստեռլինգի ռազմական վարկ, որից 100 հազարը՝ անմիջապես։ Նիստի մասնակիցներից շատերը դեմ էին դրան, նշելով, որ գանձարանն այդ հնարավորությունը չունի, որ նույնիսկ մերժվել է Վրաստանին և Ադրբեջանին վարկ բաց թողնելը, չնայած, նրանք առաջարկել էին փոխարենը մարգանեց և նավթ վաճառել Անգլիային։ Նիստն ավարտվեց զավեշտական մի որոշում ընդունելով։ Ռազմական խորհուրդը, ասվում է այդ որոշման մեջ, «չի կարող գործել բիբլիական նախադեպով, պարզապես բացականչելով. «Թող լինի Հայաստան» և բավարարվել գոհացուցիչ հետևանքով, որ կա Հայաստան, իսկ ռազմական խորհուրդը տեսնի, որ դա լավ է և թողնի նրան իր բախտի քմահաճույքին»[13]։

Մեծ Բրիտանիայի ռազմական գլխավոր շտաբի 1920 թ. ապրիլի 1-ի գաղտնի հուշագրում նշվում էր, որ, այնուամենայնիվ, «քայլեր են արվում հայերին զենք մատակարարելու ուղղությամբ, բայց այժմ ոչ մի երաշխիք չկա, որ այդ զենքը երբևէ կհասնի նրանց առանց ռազմական էքսպեդիցիայի օգնության, և ոչ էլ հավանականություն կա, որ դրանք կարող են տեղ հասնել ավելի վաղ, քան մայիսի կեսերը»։ Գլխավոր շտաբը «օգտակար քաղաքականություն» չէր համարում հայկական պետության ստեղծման պլանը, եթե նա ընդգրկվելու էր նախկին թուրքական վիլայեթներից որևէ մաս, քանի որ «այդ ժամանակ Հայաստանը կենթարկվի թուրքական և թաթարական հարձակման, մինչդեռ թուրքերը կմնան այն տարածքում, որը խոստացված է հայերին»։ Գլխավոր շտաբը գտնում էր, որ «Հայաստանի բուն շահերը պահանջում են անկեղծորեն ասել նրա ներկայացուցիչներին, որ նրա գոյությունն իբրև ինքնաբավ պետություն, եթե նա ցանկանում է յուրացնել նախկինում թուրքական որևէ տարածք, կարող է երաշխավորվել միայն թուրքական գերիշխանության տակ»[14]։

Ապրիլի վերջերին դրությունն Անդրկովկասում խիստ լարված էր։ Խորհրդային Ռուսաստանի զորքերը ծեծում էին Բաքվի դռները։ Զգալով վե-

---

12 Նույն տեղում, էջ 550։

13 Նույն տեղում, FO 371/4955, p. 70.

14 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան, 1972, էջ 609, 610։

ռահաս վտանգը, մուսավաթական կառավարությունը դիմել էր Ռուսաստանի կառավարությանը՝ խաղաղության բանակցություններ սկսելու առաջարկով։ Գ. Չիչերինը խորհուրդ էր տալիս Վ. Լենինին՝ չընդունել այդ առաջարկը։ Վ. Լենինին գրած տպրիլի 21-ի նամակում Չիչերինը խորհուրդ էր տալիս Արդրեչանին պատասխանել, որ «մեր ուժերի կենտրոնացումը վտանգ չի սպառնում նրան։ Ինչ վերաբերում է խաղաղության բանակցություններին, մենք իբր պետք է նախապես պարզենք դենիկինյան չոկատների՝ Ադրբեջանի տարածքներ նահանջելու հարցը, ինչպես նաև այն, թե ինչու են ադրբեջանական նավահանգիստները բաց դենիկինյան նավերի համար և կարո՞ղ ենք վստահ լինել, որ այլ տերությունների՝ Անգլիայի, Իտալիայի կամ Թուրքիայի ուժերը չեն մտնի Բաքու և Ադրբեջանի հետ մեր համաձայնագիրը չեն դարձնի պատրանքային»։

Չիչերինն այն կարծիքին էր, որ նման պատասխանը չէր դիտվի որպես Ադրբեջանի կողմից արվող առաջարկի մերժում և մեր ձեռքերը չի կապի։ «Իսկ լոել, նշանակում է հասկացնել, թե մենք իբր պատրաստվում ենք հարձակման»։ Չիչերինը միաժամանակ երկյուղ էր հայտնում, որ անգլիացիների փոխարեն Բաքվում կարող էին հայտնվել թուրքերը, որոնց «գիրկը կարող են նետվել մուսավաթականները»։ Այդ դեպքում, գրում էր Չիչերինը, «այնտեղ մենք ստիպված գործ կունենանք թուրքական ամբողջ բանակի հետ»։ Վ. Լենինը համաձայնեց Չիչերինի հարցադրմանը և ապրիլի 24-ին համապատասխան հեռադիր հղեց Ադրբեջանի կառավարությանը։

Ադրբեջանի սահմաններին ռուսական զորքերի մոտենալը մեծ տագնապ էր առաջացրել նաև Վրաստանում։ Ապրիլի 16-ին Վրաստանի կառավարությունը հեռագրով իր անհանգստությունն էր հայտնել Ռուսաստանի կառավարությանը։ Ապրիլի 24-ին Չիչերինը պատասխան հեռագրում Վրաստանի կառավարությանը տեղեկացնում էր, որ «Ռուսաստանի խորհրդային կառավարությունը դույզն ինչ չի ցանկանում պատերազմ Վրաստանի հետ և բոլորովին մտադրություն չունի ուժով ներխուժել նրա սահմանները»։

Վրաստանի կառավարության անհանգստությունը հիմք ուներ։ Մարտի վերջերին Թիֆլիս էր ժամանել Լեհաստանի պատվիրակությունը՝ «Անդրկովկասի բոլոր հանրապետությունների հետ բանակցություններ վարելու, «Փոքր Անտանտ» ստեղծելու և միացյալ ուժերով խորհրդային կառավարության վրա հարձակվելու համար»։ Ապրիլի սկզբներին այս կապակցությամբ Թիֆլիս էին ժամանել Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Լեհաստանի և Ուկրաինայի, Ադրբեջանի և Լեռնականների Հանրապետության ներկայացուցիչները։

Վրաստանի կառավարությանը ապրիլի 24-ին ուղարկած հեռագրում Չիչերինը նշում էր, որ Ռուսաստանի կառավարությանն անհանգստացնում էր ոչ միայն այս հանգամանքը, այլև նահանջող դենիկինյան ուժերի նկատմամբ Վրաստանի կառավարության վերաբերմունքի անորոշությունը։ «Ստիպված ենք դիմելու Ձեզ առաջարկությամբ՝ պատասխանելու մեր այդ հարցին»— գրում էր Չիչերինը։

Հայաստանի կառավարությունը ևս չէր կարող անտարբեր մնալ ծավալվող իրադարձությունների հանդեպ և այդ պատճառով էլ փնտրում էր եվրոպական երկրների և հատկապես Անգլիայի պաշտպանությունը։ Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը 1920 թ. ապրիլի 19-ին անգլիական բարձրաստիճան սպա Լուկի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարել է, որ «միայն Անգլիան է ի վիճակի և կարող է օգնել ու պաշտպանել Հայաստանին»։ Ապրիլի 23-ին այս մասին հայտնելով իր կառավարությանը, Լուկն ավելացնում է, որ ըստ Խատիսյանի տեղյակների, Հայաստանի հարաբերությունները Ֆրանսիայի հետ լարված են, քանի որ Մարաշի հարցում անհամաձայնություն կա նրանց միջև, որ Իտալիային հետաքրքրում է միայն Հայաստանի բամբակը, իսկ Ամերիկան բավարարվում է «ալյուրի պարկեր ու գթության քույրեր» ուղարկելով։ Խատիսյանը նշել է նաև, որ Հայաստանը գտնվում է մի կողմից թուրքական ազ-

գայնականներ, մյուս կողմից բոլշևիկների ու Թաթարների արանքում, որ նա «ռազմական օգնության կարիք է զգում, որպեսզի ի վիճակի լինի պետություն դառնալ»։

Այս մասին հայտնելով իր կառավարությանը, Լուկը գրում էր, որ (1) Հայաստանը կարիք ունի միջոցների, որպեսզի կարողանա պաշտպանել իր սահմանները և ազատվել իր տարածքների օկուպացումից, որ (2) դրսի օգնությամբ կարողանա գոնե մինչև աշուն ներգաղթի ենթարկել 250 հազար Թուրքահայ գաղթականների, որի համար անհրաժեշտ կլինի օգտագործել Նախիջևանի երկաթուղին, որը չնայած իր տարածքներում է, սակայն դտնըվում է Թաթարների ձեռքում, որ (3) Հայաստանը կարողանա օգտվել Բաթումի նավահանգստից, քանի որ, եթե նույնիսկ հաշտության պայմանագրով Հայաստանին տրվի Տրապիզոնի կամ այլ վայրի նավահանգիստ, կպահանջվի առնվազն 20 տարի դեպի այդ նավահանգիստները երկաթուղի անցկացնելու համար, իսկ մինչ այդ նա ծով դուրս գալու հնարավորություն չունի։ Լուկը Խատիսյանի այս խնդրանքները համարել է տրամաբանական։

Խատիսյանը Լուկին նաև տեղյակ է պահել, որ երկու շաբաթ առաջ հայկական բանակի հրամանատար գեներալ Նազարբեկովը ստացել է Քյազիմ Կարաբեքիրի՝ Էրզրումից ուղարկված նամակը, որտեղ վերջինս՝ կեղծ տեղեկատվություններով առիթ է փնտրում միջամտելու Հայաստանի ներքին գործերին։ Իսկ ապրիլի 20-ին Լուկի և կապիտան Գրեյսի պատվին տված ճաշկերույթի ժամանակ Խատիսյանը բողոքել է, որ բոլշևիկները Հայաստանի հետ խոսում են ազգայնական և զավթողական ոճով[15]։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հռչակվեց խորհրդային իշխանություն։ Հայաստանում մայիսմեկյան ցույցերը շուտով վերածվեցին հակակառավարական ապստամբության։ Ռուսական զորքերը գտնվում էին Հայաստանի սահմանների մոտակայքում։ Այս ամենը սթափեցնող ազդեցություն ունեցավ անգլիական իշխանությունների վրա։ Անգլիայի ռազմական նախարարությունը կրկին անդրադարձավ Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու հարցին։ Մայիսի 4-ին ռազմական նախարարությունը լորդ Քերզոնին հայտնեց, որ «պնդում է Հայաստանին զենք տալու առաջարկը», չնայած, մերժվել է Վրաստանին և Ադրբեջանին զենք տալու խնդրանքը[16]։ Իր հերթին, Հայաստանի կառավարությունը մայիսի 6-ին հեռագրով Անգլիայի կառավարությանը խնդրում էր անհապաղ Հայաստանի կառավարությանը տրամադրել 10 հազար հրացան, 10 միլիոն փամփուշտ, ինչպես նաև Հայաստանի կողմից գնված այն երեք ռազմական ինքնաթիռները, որոնք գտնվում էին Բաթումում։ Հեռագիրը ստորագրել էր Ալ. Խատիսյանը։

Իր հերթին, «Բրիտանական հայկական կոմիտեն» մայիսի 8-ին դիմել էր լորդ Քերզոնին, առաջարկելով, բացի ռազմական օգնություն ցույց տալուց, անգլիական սպաներ ուղարկել Հայաստան՝ հայկական բանակի կազմակերպման և հանրապետության ինքնապաշտպանության գործը կարգավորելու համար։ Դիմումում ընդգծվում էր, որ Հայաստանում ստեղծված իրավիճակը սպառնում է նաև բրիտանական շահերին։

Մայիսի 12-ին Անգլիայի կառավարությունը որոշում ընդունեց Հայաստանին վաճառել անհրաժեշտ քանակության ռազմամթերք՝ վճարումները 12 ամսվա ընթացքում կատարելու պայմանով[17]։ Մայիսի 18-ին Թիֆլիսում Անգլիայի գերագույն կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատարն իր կառավարությունից հանձնարարական ստացավ «հայտնել Հայաստանի կառավարությանը, որ զենք կտրվի, եթե Հայաստանը շարունակի իր անկախությունը պաշտպանելու հաստատ կուրսը»[18]։ Մայիսի 31-ին Լուկը «արտակարգ

---

15 Public Record office (London), FO 371/4938, p. 75 --79.

16 Նույն տեղում, FO 371/4936, p. 94.

17 Նույն տեղում, FO 371/4956, pp. 64—72, 76, 84.

18 Նույն տեղում, FO 371/4937, p. 116.

կարևոր» հեռագրով հայտնել է իր կառավարությանը, որ «Հայաստանը լի է վճռակամությամբ՝ պաշտպանելու իր անկախությունը, եթե տրամադրվեն այդպիսի միջոցներ»[19]։ Այս հանգամանքն է Անգլիային դրդել օգնել Հայաստանին՝ 40-հազարանոց բանակ ստեղծելու համար։ Անգլիական ռազմական փորձագետների օգնությամբ կազմվում է «40-հազարանոց հայկական զինված ուժեր ստեղծելու գլխավոր ծրագիր»։ Նախատեսվում էր, որ այդ բանակի հրամանատարական կազմը պետք է համալրվեր անգլիական սպաներով։ Յուրաքանչյուր սպայի համար Հայաստանի կառավարությունը պետք է վճարեր տարեկան 105 ֆ. ստեռլինգ՝ գումարած 10 տոկոս, «ծածկելու համար մահվան կամ հաշմանդամության ռիսկի համար պարգևատրումը»[20]։

Այսպիսով, նախատեսվում էր հայկական բանակի թվակազմը ավելի քան կրկնապատկել։

Լուկը գտնում էր, որ անհրաժեշտ է գրամով և զենքով օգնել ոչ միայն Հայաստանին, այլև ադրբեջանական հակախորհրդային ուժերին, չնայած այն հանգամանքին, որ մայիսին Ելիզավետպոլում բարձրացրած նրանց խռովությունը ճնշվել էր բոլշևիկների կողմից։ «Եթե պետք է վերջ տալ Բաքվում բոլշևիկյան իշխանությանը, դրա հետ միասին Պարսկաստանում Անգլիային սպառնացող վտանգին,—գրում էր Լուկը,—ապա մենք պետք է ադրբեջանցիներին ապահովենք պատերազմի համար անհրաժեշտ պարագաներով»[21]։ Լուկը շարունակում էր պնդել նաև Վրաստանին անհապաղ ռազմական օգնություն ցույց տալու առաջարկի վրա։

Անդրկովկասի հանրապետությունների հակաբոլշևիկյան դիրքերը զգալի թուլացան, երբ 1920 թ. գարնանը Անգլիան ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել նաև Բաթումից։ Այս հարցում երկրորդական նշանակություն չունեցավ նաև դենիկինյան զորքերի պարտությունը։ «Կամավորական բանակի կործանումը,—ասված է Անգլիայի ռազմական խորհրդի 1920 թ. ապրիլի 15-ի հաղորդագրությունում,—մերկացնում է Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները և Բաթումի մարզը՝ սովետների ռազմական ուժերի անհապաղ առաջխաղացման համար... Իրադարձությունների նման ընթացքում Բաթումում գտնվող բրիտանական աննշան ուժերի վիճակը վտանգավոր է դառնում, քանի որ նրանք չեն կարող ընդդիմանալ բոլշևիկյան ուժեղ ու վարակիչ պրոպագանդային։ Բացի այդ, նրանք այնքան ուժեղ չեն, որպեսզի կարողանան դիմադրել հյուսիսից շարժվող սովետների զորքերին...»։ Ելնելով վերևում ասվածից, ռազմական խորհուրդը որոշում է «առանց ձգձգման Բաթումից դուրս բերել բրիտանական ռազմական ուժերը»[22]։

Ընդունելով որոշում՝ Բաթումից իրենց զորքերը դուրս բերելու մասին, անգլիական իշխանությունները հույս էին տածում, որ Անդրկովկասի հանրապետությունները համաձայնության կգան համատեղ ուժերով այն Ռուսաստանից պաշտպանելու համար։ 1920 թ. ապրիլի 27-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը հղած հեռագրում իրազեկիչ սպան տեղյակ է պահում, որ բոլշևիկյան զորքերը մոտեցել են Բաքվին, որ «Կովկասյան կառավարությունները դաշնակիցների հետ անց են կացրել կոնֆերանս, որից հետո վրացիները համաձայնություն են տվել համագործակցել Ադրբեջանի հետ... Լուր է ստացվել Սան-Ռեմոյում տեղի ունեցած բանակցությունների մասին, որոնց նպատակն է կովկասյան պետություններին ստիպել համաձայնության գալ Բաթումի ապագա կարգավիճակի վերաբերյալ։ Բանակցությունները ձախողվել են վրացական ներկայացուցիչների համառ և անհաշտ դիրքի պատճառով...»[23]։

---

19 Նույն տեղում, FO 371/4941, p. 83.

20 Նույն տեղում, FO 371/4958, p. 201.

21 Նույն տեղում, FO 371/4947, p. 85.

22 Նույն տեղում, FO 371/4935, p. 41.

23 Public Record office (London), FO 371/4936, p. 2.

Սան-Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսի ձախողման պատճառների մասին 1920 թ. ապրիլի 28-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը հետեյալ տեղեկատվությունն է ուղարկել Թիֆլիս՝ գեներալ Ուորտրոպին. «Սան-Ռեմոյում համառ և երկարատև փորձ կատարվեց պարտավորեցնել կովկասյան պետությունների ներկայացուցիչներին՝ համաձայնության գալ Բաթումի ապագա կարգավիճակի վերաբերյալ։ Պլանով նախատեսված էր Բաթումից դաշնակից զորքերը դուրս բերելուց հետո այն հանձնել Վրաստանին, բայց երաշխիքով, որ ապագայում այդ քաղաքը կօգտագործվի որպես ազատ նավահանգիստ՝ երեք պետությունների համար, ապահովելով նրա հետ երկաթուղային կապը Հայաստանի համար։ Ադրբեջանցիներն ու հայերը դրսևորեցին առավել հաշտվողական դիրք։ Կազմվեց համաձայնագրի նախագիծ, որը նախնական կարգով ստորագրվեց։ Բայց հետո վրացական պատվիրակությունը հրաժարվեց դրանից, որը հետևանք էր նրանց համառության, կամակորության և որոշ չափով կարճատեսության։ Նրանք հավանաբար հույս ունեն ազատ ժամանակ խեղդել իրենց հարևաններին, Բաթումի հարցը դարձնելով անքննարկելի... Նրանք հրաժարվեցին ստորագրել համաձայնագիրը, և բանակցությունները ձախողվեցին։ Դուք այդ մասին պետք է հիշեք վրացական կառավարության հետ ձեր հետագա գործարքներում»[24]։ «Որպես իսկական արհավիրքի անկանխատեսելի հանգամանքներից խուսափելու միջոց», որոշվեց բրիտանական զորաբաժինը դուրս բերել Բաթումից։ Չնայած այս որոշմանը, Անգլիայի կառավարությունը իր 1920 թ. մայիսի 6-ի նիստում նշեց, որ «քաղաքական նկատառումներով ցանկալի է համարում քաղաքը թողնել անգլիացիների ձեռքում... և գտնում է, որ պետք է առնվեն լուրջ միջոցներ, որպեսզի դրությունը փրկվի»[25]։

Անդրկովկասում ֆրանսիական և իտալական միսիաներն իրենց հերթին ձգտում էին պաշտպանել սեփական շահերը, որի պատճառով հակամարտության մեջ էին գտնվում անգլիացիների հետ։ Անդրկովկասի ժողովուրդները, գրում էր Ստոքսն իր կառավարությանը, «հասկացել են... որ Անդրկովկասում դաշնակիցների միջև համերաշխություն չկա։ Ֆրանսիայի և Իտալիայի միսիաների անդամները մշտապես կշտամբում են Մեծ Բրիտանիային՝ Վրաստանի կառավարության առջև։ Երբ Բաթումի մարզի շուրջ տագնապ բարձրացավ, երկու միսիաներն էլ Վրաստանին ստիպում էին ներխուժել այդ մարզը, հակառակ դեպքում, պնդում էին նրանք, Վրաստանը երբեք այն չի ստանա։ Պետք է շմոռանալ, որ այս դեպքում Իտալիայի ներկայացուցիչը առանց վարանելու Կ. Պոլսում Իտալիայի գերագույն կոմիսարին զեկուցեց, որ վրացական զորքերը Բաթումի մարզ են մտել բրիտանական ռազմական իշխանությունների թույլտվությամբ»[26]։

Հաշվի առնելով այս ամենը, Ստոքսը 1920 թ. հուլիսի 15-ի իր զեկուցագրում կառավարությանը խորհուրդ էր տալիս միջոցներ ձեռնարկել՝ վերականգնելու Անգլիայի համար «ձեռնտու իրադրությունն Անդրկովկասում, որը մասամբ խաթարվեց Ադրբեջանում բոլշևիկների ներխուժման հետևանքով»։ Նա Վրաստանն էր համարում «այն հիմքը», որի վրա հենվելով կարելի կլինի վերականգնել Անգլիայի համար «ձեռնտու իրադրությունն Անդրկովկասում»։ «Ես պնդում եմ,—գրում էր նա,—որ մեր շահերից է բխում Վրաստանին քաղաքական ու բարոյական հնարավոր բոլոր օգնություն ցույց տալը։ Միայն Վրաստանին օգնելով մենք կարող ենք օգնել՝ փրկելու Հայաստանը կամ վերականգնելու Ադրբեջանի անկախությունը և այսպիսով պաշտպանել մեր շահերը Պարսկաստանում»[27]։

Այս գործոններն էին դրդում Անգլիայի կառավարությանը ռազմական օգնություն կազմակերպելու նաև Հայաստանին, որին ռազմական վարկ բաց

---

24 Նույն տեղում, էջ 20։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, FO 371/4944, p. 138.

27 Նույն տեղում։

թողնելու որոշումը կայացվեց մայիսի առաջին օրերին։ Մինչ այդ, ինչպես արդեն նշվեց, անգլիական ռազմական իշխանությունները նույնիսկ արգելք էին հարուցում Հայաստանի կողմից արդեն գնված երեք ինքնաթիռները Հայաստան առաքելուն։ 1920 թ. ապրիլի 19-ին, երբ Լուկը Երևանում հանդիպում էր ունեցել Ա. Խատիսյանի հետ, վերջինս զրույցի ժամանակ բողոքել էր, որ չի հասկանում, թե «ինչու Հայաստանի կողմից գնված երեք ինքնաթիռները և որոշ քանակությամբ փամփուշտները Բաթումում վերջին երկու ամիսների ընթացքում զավթել են բրիտանական ռազմական իշխանությունները»[28]։ Լուկը խուսափողական պատասխան էր տվել։ Սակայն Անգլիայի ռազմական նախարարության մի զեկուցագրից հայտնի է դառնում, որ ռազմական փորձագետները «խիստ հնարավոր են համարել, որ այդ մեքենաները կարող են ընկնել բոլշևիկների ձեռքը»[29]։

1920 թ. մայիսի 24-ին Անգլիայի կառավարության հանձնարարությամբ, Լուկը Հայաստանի կառավարության կողմից լիազորված Ավ. Ահարոնյանին և Նուբար փաշային հանձնեց 1 մլն 60 հազար ֆունտ ստեռլինգ։ Ռազմական այդ վարկը տրվել էր 12 ամսով, 5 տոկոսով, պայմանով, որ հատկացված վարկով զենքը պետք է գնվեր Անգլիայի կառավարությունից[30]։

Վրաստանի կառավարությունը, օգտվելով առիթից, Հայաստանի կառավարությունից պահանջեց, որպեսզի իր տարածքներով փոխադրվող զենքի 23 %-ը թողնվի Վրաստանին։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված 1920 թ. մայիսի 26-ին համապատասխան պայմանագիր կնքեց Վրաստանի կառավարության հետ[31]։

Հունիսի 10-ին արտաքին գործերի նախարարություն ուղարկած հաղորդագրությունում Լուկը հայտնում էր. «Ի շարունակումն մայիսի 24-ի իմ թիվ 172 հեռագրի, պատիվ ունեմ ներփակել Հայաստանի կառավարությունից ստացած լրացուցիչ փաստաթուղթը՝ ի հաստատումն նախապես պարոն Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային ամբողջապես տրված 1 միլիոն 60 հազար ֆունտ ստեռլինգի մասին՝ վճարելու Հայաստանին մատակարարվող զենքի համար»։ Հայտնվում էր նաև, որ մայիսի 24-ին ուղարկած հաշվում սխալմամբ նշված է եղել 1 մլն ֆունտ ստեռլինգ[32]։

Գնված զենքերի մի մասը 1920 թ. օգոստոսին առաքվեց Հայաստան։ Անգլիայի ռազմական նախարարության օգոստոսի 10-ի զեկուցագրից հայտնի է դառնում, որ առաքված զենքից 2500 հրացան թողնվել է Վրաստանին[33]։ Իսկ սեպտեմբերի 10-ին Լուկի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ալ. Խատիսյանը հայտարարել է, որ «Հայաստանի կառավարությունը արդեն ստացել է ռազմական ամբողջ հանդերձանքը, որի մասին հարցում էր կատարված։ Ավելին, ստացվել է նաև լրացուցիչ մատակարարում Ֆրանսիայից և Հունաստանից»[34]։

1920 թ. հունիսի 5-ին Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Դեվիսը խիստ գաղտնի ծածկագիր է ուղարկել Վաշինգտոն, որտեղ ասված է, որ անգլիական կառավարությունը Հայաստանին բաց է թողել մեկ մլն ֆունտ ստեռլինգի ռազմական վարկ, որի դիմաց գնվելու էր 25 հազար հրացան, 50 մլն փամփուշտ, 400 գնդացիր, 12 դաշտային հրանոթ, 32 լեռնային հրանոթ, 40 հազար մարդու համար ռազմական հանդերձանք և այլն։ Միաժամանակ ասվում էր, որ, ըստ տեղեկությունների, ֆրանսիացիները ևս պատրաստվում էին ռուսական հրացաններ ուղարկել Հայաստան՝ Բուլղարիայի և Վրաստանի վրայով[35]։

---

28 Նույն տեղում, FO 371/4957, p. 76.
29 Նույն տեղում, FO 371/4957, p. 30.
30 Նույն տեղում, FO 371/4956, p. 176, 183.
31 Նույն տեղում, FO 371/4957, p. 20.
32 Նույն տեղում, էջ 173։
33 Նույն տեղում, FO 371/4944, p. 190.
34 Նույն տեղում, FO 371/4946, p. 187.
35 The National Archives of the USA (Washington), 860J, 24/5

Հայաստանի կառավարության՝ 1920 թ. հուլիսի 25-ի հաղորդագրության համաձայն, Հայաստանը Հարավային Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարությունից ստացել էր 3 մլն փամփուշտ, որի կեսը զիջել էր Վրաստանին։ Իսկ Անգլիայից ստացվել էր 25 հազար «բոշ» սիստեմի հրացան, 400 թեթև «Սաքսիմ» սիստեմի գնդացիր, 58 հազար «Վիկերտ» սիստեմի փամփուշտ, 40 հազար զինվորական համազգեստ, 500 հեռադիտակ, մեծ քանակությամբ դեղորայք և վիրաբուժական գործիքներ։ Իսկ Հունաստանի կառավարությունը խոստացել էր Հայաստանին ձրիաբար հանձնել 10 հազար «Դրա» սիստեմի հրացան՝ յուրաքանչյուր հրացանի համար 400 փամփուշտով[36]։

Անգլիայում հետագայում գնված զենքի մի զգալի մասը այնպես էլ Հայաստան չհասավ։ 1920 թ. խոր աշնանը, երբ Հայաստանում արդեն խորհրդային կարգեր էին հաստատվել, ճանապարհին գտնվող ամբողջ զենքը հանձնվեց քեմալականներին։ Ահա թե ինչ է ասված այդ մասին Անգլիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի՝ Մըքդոնելի 1921 թ. փետրվարի 24-ի գրառումներում. «Հայաստանին մատակարարած զենքը աճեցրեց (թուրքական—Գ. Գ.) նացիոնալիստների պաշարները մոտավորապես 100 տոկոսով, որի համար Քյազիմ Կարաբեքիրը շնորհակալական հեռագիր է ուղարկել բրիտանական ռազմական իշխանություններին...»[37]։ Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ հայ ժողովրդին օգնություն էր ցույց տրվում զուտ քաղաքական նկատառումներով և ոչ թե նրա շահերի թելադրանքով։ Սա տխուր, բայց իրական փաստ է։

Այս փաստն արձանագրել է նաև Անգլիայի համայնքների պալատի անդամ Ա. Վիլյամսը, իր 1920 թ. դեկտեմբերի 23-ի ելույթում։ Դիմելով ներկաներին, նա դատապարտել է իր կառավարության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և հանդիմանել է նրանց, ովքեր, Հայաստանը համարելով «ոչ միջազգային կարևորության գործոն», առաջարկում էին ձեռք քաշել Հայաստանից ընդհանրապես։ «Փաստն այն է,—ասել է Վիլյամսը,— որ հայերը մեր կառավարությունից ամռանը ստացել են որոշ զենքեր, բայց դա եղել է ընդամենը մեկ անգամ... Մինչ այդ, նրանք աղաչում էին մեր կառավարությանը մարդիկ ուղարկել օգնելու իրենց՝ կազմակերպելու պաշտպանական ուժերը, և մեր կառավարությունը հանգիստ մերժեց նրանց։ Նրանք խնդրում էին զենք և զենք չստացան։ Նրանք իրենց համար էին կռվում։ Նրանք գնեցին ինքնաթիռներ, և մեր կառավարությունը կասեցրեց (արդեն Բաթումում գտնվող—Գ. Գ.) ինքնաթիռների առաքումը»[38]։

Բնական էր, որ այս պայմաններում Հայաստանի Հանրապետությունը չէր կարող արդյունավետ կազմակերպել իր պաշտպանությունը։ Գնդապետ Ստոքսը, ամփոփելով Անդրկովկասում Անգլիայի վարած քաղաքականությունը առ 15-ը հուլիսի 1920 թ., իր օգոստոսի 5-ի զեկուցագրում նշում էր. «Բրիտանական շահերի տեսակետից ներկայումս դրությունն Անդրկովկասում հեռու է բավարար լինելուց... Անմիտ ու անարդար կլիներ չհասկանալ, որ Անդրկովկասի բոլոր երեք հանրապետությունները ստեղծված իրադրությունում ավելի քիչ են մեղավոր, քան մենք։ Գեներալ Դենիկինին ցույց տված մեր հսկայական օգնությամբ մեզ ոչ միայն չհաջողվեց ստիպել նրան կենտրոնացնել իր ուժերը բոլշևիկների նկատմամբ հաղթանակ տանելու համար և հետ պահել նրան Անդրկովկասում ոչ անհրաժեշտ անհանգիստ վիճակ ստեղծելուց, այլև մենք զոհաբերեցինք մեր սեփական շահերը և ձեռնպահ մնացինք երեք հանրապետություններին զենք և ռազմամթերք մատակարարելուց, ինչը հնարավորություն կտար նրանց ամեն կերպ դիմակայել բոլ-

---

36 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 359։

37 Public Record office (London), FO 371/6268, p. 148.

38 The National Archives of the USA (Washington), 860J, 01/380.

ևիկյան վտանգին, երբ այն սպառնում էր նրանց... Մենք ամեն հնարավոր բան պետք է անենք, որպեսզի ցույց տանք այդ հանրապետություններին, որ մենք խիստ հետաքրքրվում ենք նրանց ապագայով»։

Ստոքսն այնուհետև ընդգծում էր, թե որքան կարևոր է Անդրկովկասի դերը Մեծ Բրիտանիայի համար, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական առումով։ Նա հատկապես ընդգծում էր Թիֆլիսի կարևորությունը՝ «որպես Միջին արևելքում քաղաքական ակտիվության կենտրոնի»։ Նա անհրաժեշտ էր գտնում Թիֆլիսում պահել բրիտանական ուժեղ և կարող միսիա, որն ընդունակ լիներ հակազդելու ռուսական և թուրքական քաղաքական ակտիվացմանը Միջին արևելքում[39]։

Այսպիսին էր Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակը հայ-թուրքական պատերազմի նախօրեին։

ОБ ОКАЗАНИИ ВОЕННОЙ ПОМОЩИ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Академик НАН РА Г. А. ГАЛОЯН

Резюме

С первых же дней своего существования Республика Армения постоянно подвергалась агрессивным нападкам кемалистской Турции и мусаватского Азербайджана с целью захвата ее территории. Этому способствовали противоречия, существующие между Советской Россией и Арменией.

Правительство Армении в течение всего 1919 года и первых месяцев 1920 года неоднократно обращалось к европейским державам, в частности Англии, а также Парижской мирной конференции с просьбой оказать военную помощь для организации самозащиты, но всегда получало отказ.

Обнаруженные нами материалы в госархивах Лондона, Вашингтона и Москвы неопровержимо доказывают, что лишь весной 1920 года, когда в Азербайджане была установлена Советская власть и возможность советизации в Армении становилась реальной, европейские державы проявили заинтересованность в оказании военной помощи Армении.

В мае 1920 года Англия заключила договор с Арменией об ассигновании 1 млн. 60 тыс. фунтов стерлингов для покупки вооружения в Англии. Часть приобретенного вооружения поступила в Армению летом 1920 года. Но когда в конце ноября в Армении была установлена Советская власть, находящееся в пути вооружение было передано кемалистской Турции. Кязим Карабекир специальной телеграммой выразил за это благодарность английским военным властям.

---

[39] Public Record office (London), FO 371/4944, p. 140—150.